եկաց Արիանոսաց, և եղեւ առիթ խռովութեանց և ատելութեանց բազմաց. զի վերստին վարեցան ուղղափառ եպիսկոպոսունք յաթոռոց տառապանօք և լլկանօք, ընդ որս և Աթանաս. եւ 'ի տեղի նոցա եդան Արիանոսք: Զի 'ի մտանել Գէորգայ եպիսկոպոսի Կապադովկացւոյ յեկեղեցին յԱղէքսանդրիա հեթանոսական ամբոխիւ յաւուր տօնի Զատկին, և յաւարի առնուլ զայն և անարգել զսրբութիւնն Աստուծոյ, Աթանաս խոյս ետ անտի և մեկնեցաւ 'ի Հռոմ (350): Իսկ Մաքսիմոս եպիսկոպոս Երուսաղէմի խոստովանող առձայնեալ, զի 'ի ժամանակս հալածանաց զրկեալ էր յաջոյ ականէ, որպէս և աջոյ սրունքն ջախջախեալ վասն 'ի Քրիստոս հաւատոյն. ձգեցաւ 'ի ժողովն Տիւրոսի յԵւսեբեանց ընդդէմ Աթանասի. նոյնպէս հարկեցաւ եւս առաջիկայ գտանել 'ի միւս ժողովն Երուսաղէմի ընդդէմ նորուն Աթանասի զկնի կատարման նաւակատեաց Տաճարին Ս. Յարութեան, յորում ընկալաւ զԱրիոս, որով համարեցաւ 'ի կարգի Կեսարիոսեանց: Սա ձեռնադրեաց զՍ. Կիւրեղ սարկաւագ 'ի քահանայութիւն եկեղեցւոյն Երուսաղէմի, եւ նա հոգեբուղխ վարդապետութեամբ մխիթարէր զժողովուրդն: Դարձաւ Աթանաս 'ի Հռոմայ թղթով Կայսեր 'ի Կոստանդինուպօլիս, և հրաման ետ նմա երթալ ունել զաթոռ իւր եւ զոր ինչ թուղթք հակառակութեան եւ մատնութեան գրեալ էին վասն նորա, մաշեցան 'ի հուր: Եւ Աթանաս եկ յԵրուսաղէմ եւ պատմեաց Մաքսիմոսի զամենայն անցս ժողովոյն Սարդիկիայ և զկամս թագաւորաց, և նորա ուրախացեալ ընդ դարձ նորա արար ժողով 15 Եպիսկոպոսաց, ընկալաւ զԱթանաս 'ի հաղորդութիւն և գրեցին գիր խնդակցութեան միաբան ստորագրութեամբ յԱղէքսանդրիա և առ եպիսկոպոսունս Եգիպտացւոց, աւետարանելով նոցա զդարձն Աթանասի: Այս կացեալ Աթանասի աւուրս ինչ յԵրուսաղէմ, մեկնեցաւ յԱղէքսանդրիա յաթոռ իւր:

Կացեալ Մաքսիմոսի 'ի հայրապետութեան ամս 15 վախճանեցաւ (350): Անժառանգ մնաց առ վայր մի աթոռն Երուսաղէմի, զի Արիանոսք գուն գործէին տիրել այնմ, եւ կէսք զՀերակլիոս ոմն ասէին՝ թողեալ 'ի Մաքսիմոսէ լինել իւր աթոռակալ. իսկ ժողովուրդն խնդրէր զԿիւ-